

Միսաք Մեծարենց



- Միսաք Մեծատուրեան
- 1886(Յունուար 19)–1908(Յուլիս 4)
- Ծնած Բինկիան, Ակն (Գարեգին Սրուանձտեանցի նշումը)
- 1892 գիւղի Մեսրոպեան դպրոցը
- 1895-ին Սեբաստիա (Սվազ), Արամեան վարժարան, ապա ամերիկեան միսիոնարներու Անատոլիա գիշերօթիկ գուլէժ
- 1901 ծեծ, դանակահարութիւն

Կենսագրական տուեալներ, գործեր

- Թորախտ, մի քանի ամիս բուժում Սբ. Յակոբի վանքին մէջ:
- 1902 Պոլիս, հորը մօտ, Կեդրոնական վարժարան:
- 1905 կիսատ կը ձգէ ուսումը՝ հիւանդութեան պատճառով:
- Շաւասպ, Ծիածան, Հրաչեայ, օր. Սիրանոյշ Պէրպէրեան:
- 1908 հոգեվարքը Շաբաթէն Կիրակի լուսցող գիշերը: Կը թաղուի Պոլսոյ Պալըքլի գերեզմանատունը:
- 1906-ին կը պատրաստէ իր առաջին հատորը «Ոսկի արիշին տակ» խորագրով, գրաքննութիւնը կը մերժէ զայն. յաջորդ տարուան Յունիսին լոյս կը տեսնէ «Ծիածան» խորագրով (1903-06): Նոյն տարուան Սեպտեմբերին «Նոր տաղեր»:



Գրական գործեր

- Բանաստեղծություններ «Նոր տաղեր»-ն ետք գրուած:
- 1934-ին Թորոս Ազատեան լոյս կ'ընծայէ Մեծարենցի արձակ էջերը «Ոսկի արիշին տակ» խորագիրը օգտագործելով:
- Մամուլի մէջ գրուած՝ «Բարախումներ»:
- 1981 «Միասք Մեծարենց երկերի լիակատար ժողովածու», Երեւան, խմբագիրներ Ա. Շարուրեան եւ Է. Ջրբաշեան:
- 1986 «Միասք Մեծարենց ամբողջական երկեր», Անթիլիաս, Լիբանան:
- «Իմ մեծ ծարաւս իսկատիպ գրականութեան մը իրականացումն է» Մ.Մ.
- Յօդուածներ՝ «Ինքնադատութիւն», «Նարեկացիին հետ», «Սեմպոլիզմ»ը, «Յետամնաց բարեկենդան», «Աղեղ ու կապարճ» (Ենովք Արմէնի դէմ):
- Արձակ էջեր, թարգմանութիւններ, նամակներ:

Մեծարենցեան կախարդանքը

- Անձնական փորձառութենէն անանձնականին
- Միսթիք, անձնական փորձառութիւն, բնութեան հետ միաձուլում
- Տիգիքապէս, հոգուով, մտքով ու ջիղերով ապրուած փորձառութիւն մը ինչպէս տանիլ գիրի մակարդակին – ասիկա բանաստեղծի մը ամենամեծ մարտահրաւերը չէ , ի նչ վարպետութեամբ Մեծարենց կը յաջողի այս մէկը իրականացնել ձայնային հրավառութեամբ, շարժումով, գոյներու ու բոյրերու երանգներ տալով բառերուն եւ այս բոլորը ելեկտրական հոսանքի մը պէս փոխանցելով ընթերցողին՝ միաժամանակ ստեղծելով նուրբ ու թափանցիկ խորունկ աշխարհ մը:

Մեծարենցի բառապաշարէն

Գոյներ, քարի անուններ

- զիւմրիւթ - զմրուխտ
- թարշիշ – յակիինթ, կանաչորակ-դեղին թանկագին
- ակատ, ակաթ – յակիինթ, ազնիւ քար
- մեղեսիկ – մանիշակագոյն թանկագին քար
- լագուարթ – երկնագոյն կապոյտ, այդ գոյնի քար
- շառ – դեղնաւուն, շէկ
- սուտակ – կարմիր յակիինթ (hyacinth, ruby)
- շափիւղայ – կապոյտ գոյնով ազնիւ քար
- հիր - ծիրանագոյն

Բառեր, նրբերանգներ

- մարմաշ – նուրբ գործուածք
- սայրշում – մետաքս:
- ջանջիլ – ազնիւ կտաւ
- սնդուս – նուրբ կերպաս
- շամանդաղ, մառախուղ, մշուշ, բալաձիգ
շաքիլ – արմատի ճիւղ
քրքում – զաֆրան
պակուցել – վախցնել, սքանչացումով վախ